


ՀԱՅԿԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ

ԵՐԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿՐԱԿԱՆ


ԾԱԳԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԿԱՆՆԵՐ



ՀԱՍՈՒՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ
ՀՈՌՎՄ

24



ԵՆ ԵՐ
ԵՆ ԵՐ
ՏՈՒՐԻՆ

1. Կաթողիկէ Արձագանգը առ սցծմ կը հրատարակուի ի Հռոմ: Առաջին վեցանգնայի բաժանորդագիւնն է մեկ մեծիս անոնց համար որ ի Կ. Պօլիս՝ Կաթողիկոսարանի մէջ, իսկ ի գաւառս՝ Եպիսկոպոսարաններու կամ Առաքնորդարաններու մէջ կ'ուզեն բաժանորդագրուիլ: Ուղղակի Հռոմ դիկելու համար՝ Չորս (4) ֆրանկ է: Հասցեն է. Collegio Armeno, 31 S. Nicola da Tolentino. Roma — Երբ ի մօտոյ Կ. Պօլիս փոխադրուի, ծաւալն ու ձեւը, ինչպէս նաեւ բաժանորդագրութեան պայմանիք վերջնականապէս պիտի ճշդուին: — Մեկ թիւը՝ մեկ դահեկան է:

2. Արձագանգը կը հրատարակուի Շաբաթ օրերը:

3. Խնքագրութիւնս պատշաճորեայ չէ անպատճառ կամ նոյնութեան հրատարակելու իրեն դրկուած ո՛ր եւ է յօդուած:

4. Ստորագրեայ յօդուածոց պատասխանատւութիւնը ամբողջովին կը մնայ գրողներուն վրայ:

5. Նամակ եւ յօդուածներ կը դրկուին ուղղակի խմբագրութեան:

6. Ձեռագիրներ եւ չեն դարձուիր:

7. Ծանուցմանց համար ընտնուաւոր պայմանագրութիւն կը կատարուի:



Սորոգեցին որ ղբկոտ թիւերն բաժանորդներն տանց յետը կանոնադրապէս ղեն հանդիւր. եւ խնդրեն որ բաժանորդք հաճին ծանուցանել ճշդիւ որպէս զի դրկուել ղբկոտ իրենց պահած թիւերն:




ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆՔ

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԻԱՐԱՆԻ




Առաջին Տարի

2 Դեկտեմբեր 1911

Թիւ 24.

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԻԱԿԱՆ ՍԻՒՆՀՈՎՈՅ

Ի ՀՌՈՎՄ



Ս. Սիւնհոտը ամբողջ շաբթուան մէջ իւր ուշադիր և խղճամիտ ուսումնասիրութեանց առարկայ ըրած էր սինոդական Գործոց Չորրորդ՝ Յաղագս աստուածային Պաշտման և Հինգերորդ՝ Յաղագս Կղերիկոսաց գլուխները: Զանոնք սինոդարար վճռելու և սահմանելու համար գումարեցաւ հինգերորդ հանգիստաւոր Նիստն յեկեղեցւոյ Ս. Նիկողայոսի Տաշնտինացւոյ, Կիւրակէ օր, 26 Նոյեմբեր առաւօտեան ժամը 8ին: Զայնաւոր Պատարագը հանգիստապէս մատոյց Արհի. Գրիգոր Եպիսկոպոս Պահապանեան, Վիճակաւոր Անկիւրիոյ, որ և տեւեց գրեթէ մէկուկէս ժամ, գեղեցիկ եղանակաւորութեամբ, անվթար ծիսակատարութեամբ և կարգաւորութեամբ խոր տպաւորութիւն մը ձգելով ներկայից վրայ, որք այլեւայլ կաթողիկէ

ազգութիւններէ իւրեւ հանդիսատես խմբուած էին ի տես այս վսեմաշուք բաներու ուրք Հռոմայ մէջ իսկ այնչափ հազուագիւտ են . իրենք զազափար կազմեցին, ինչպէս շատերն ապա յայտնեցին, թէ հայ ծէսը երբ անթերի կատարուի, յիրաւի մեծվայելուչ է և չքեղ: Յետոյ երբ Պատարագն աւարտեցաւ, Ամենապատիւ Պատրիարքը զգետաւորեալ մատեաւ իւր ընթերակայից հետ սուաջի բեմին և սկսաւ սովորական մաղթանօք յօգնակաւնութիւն կոչել զՍ. Հովին Աստուծոյ, « զՆորոգողն ամենայնի » յորոյ « ի խնամս պահպանութեան Հովին քաջ զհօտս իւր տրար ապաստան և սփռեաց զճառագայթ նորա յեկեղեցի իւր մինչև ցյաւիտեան: Ի քէն շարժին լեզուք մեր ի պատարագս օրհնութեան, և անձինք մեր կարգեցան ի ապաս զանազան շնորհաց քոյ պաշտաման »: Նոյնպէս երգուեցան քաղցրալուր և գերիմաստ շարականներն, յորոց միջի վեհօրէն հնչեց նոյն սուկեդրուապ կամարներու և մարմարապատ տաճարին անջլպետին մէջ նաև կաթողիկէ կրծոց այն դարուսր սրտագին հառաչք, վկայական ազտգալը, հպատակութեան ձայնը, որ՝ ինչ քաջքշուք մեկնութիւն ալ տայ անմխիթար հաւատադրթութիւնը, պիտի հնչէ դարուց ի դարս Արարատայ հարազատ որդւոց համար ի խնդութիւն և ի դաւանութիւն ձգմարտին, Որդւոյն Աստուծոյ կարգադիր հրամանին. « Կեցո՛ղ զորչի ծառայի քո զոր ի Հռոմայ Գահիցն վերապատուեցիր, ուր եդին զվէմն հաւատոյ հիմանսուրը Եկեղեցւոյ », յետ սաղմոսին՝ կարգացուեցաւ Ս. Աւետարանը, և ի լրումն մաղթանաց, Սինոդական Հարք իրենց հայրապետական զգեստներով զարդարուած, յառաջացան Սինոդալայրն ու բազմեցան իրենց սթոռներուն վրայ:

Քարոզն այս անգամ անուկնկալ մը եղաւ հանդիսատես հաւատացելոց համար, որ զարմացան տեսնելով սինոդական Հարք մէկը որ կ'ելլէր ամպխոնի սանգուխներէն. Արհի. Ստեփան Եպ. Իրաւյէրեանն էր, որ վարդապետական շատ լուրջ և ազգեցիկ ցուցադրութիւն մ'ըրաւ Նուիրապետական կարգի, զոր կը համառօտեմք հոս.

Փակագործութիւնը շարունակելու համար Միածին Որդին Աստուծոյ երկինք համբառնալէ յառաջ հաստատեց Եկեղեցին՝ պահապան, տարածող և տւանդապահ Ս. Կրօնից: Եկեղեցին կազմակերպեալ ընկերութիւնն է հաւատացելոց որք միացած են մի և նոյն հաւատքի դաւանութեան, միև նոյն խորհրդոց հաղորդակցութեան, և հպատակութեան օրինաւոր Հովուաց, որոց տեսանելի Գլուխն է Հռովմայ Ս. Քահանայապետը: Ա. Սրբագան Պապը Յիսուսի Քրիստոսի Փոխանորդն է և Ս. Պետրոսի Թաղորդը,

Եկեղեցւոյ գերագոյն Հովիւը . կախում ունի միայն Աստուծոյ, որ ուղղա-
կի կը հաղորդէ անոր իւր իշխանութիւնը . Բ . Եպիսկոպոսներն Առաքելոց
յաջորդներն են , դրուած Հոգին սուրբէն ի վարչութիւն իրենց թեմերուն ,
ընդ իշխանութեամբ Ս . Քահանայապետին որ կը ջնորհէ անոնց կանոնա-
կան կարգումը . այս աստիճանի մէջ արժանաւորութեամբ համեմատարար
բարձր են Արքեպիսկոպոսները , Նախագահը և Պատրիարքները : Գ . Քա-
հանայք Եպիսկոպոսաց գործակիցներն են : — Օրինաւոր հովիւ ըլլալու հա-
մար կը պահանջուի 1 . Կարգի իշխանութիւն . 2 . Իրաւաքանութեան իշխա-
նութիւն . ասոնք Յիսուս Քրիստոսէ տրուած իշխանութիւններն են իրեն
պաշտօնէից : Որով Քրիստոս ինքն է որ կը կառավարէ զԵկեղեցին , օրի-
նաւոր պաշտօնէից ձեռքով . « Որ ձեզ լսէ ինձ լսէ » : — Եկեղեցւոյ ան-
դամներն են այն ամէն մարդիկ որ մկրտուած են , և որ հպատակ են Սըր-
բազան Քահանայապետին և կը դաւանին Յիսուսի Քրիստոսի ճշմարիտ
կրօնքը :

Ապա իւրաքանչիւր դասակարգութեան անանձնայատկութիւնները
մի առ մի պարզեց ընդարձակեց կորովի և կանոնական տրամաբանու-
թեամբ . Ա . Ս . Քահանայապետը նկատեց իբրեւ Փոխանորդ Քրիստոսի ,
հարազատ յաջորդ Ս . Առաքելապետին , անխալ վարդապետ ընդհանուր
Եկեղեցւոյ , հասարակաց Հայր ամէն Հովիւներու և ամէն հաւատացիւց ,
և գերագոյն Գլուխ Եկեղեցւոյ . Նա է որ կ'արածէ թէ՛ գառնուկները թէ
սէխարները , և կենդրոն է Միութեան . իրեն համար ըսաւ Քրիստոս յան-
ձին Պետրոսի . « Ես սղաշեցի քեզի համար որպէս զի քու հաւատքդ
չպակսի . և դու երբեմն դառնաս ու հաստատես քու եղբայրներդ » : Լիա-
կատար է անո՞ւ վրայ վարչական , օրէնսդրական և դատաստանական իշ-
խանութիւնն յԵկեղեցւոյ : — Բ . Եպիսկոպոսները Քրիստոսի Առաքելոց
յաջորդներն են . Հոգին Սուրբէն կարգուած տեսուչներ Ս . Եկեղեցւոյ մէջ ,
ընդ իշխանութեամբ Փոխանորդին Քրիստոսի , որ և է Գլուխ Եկեղեցւոյ :
Կը տրուի անոնց իշխանութիւն կարգի՝ յԱստուծոյ , և իշխանութիւն ի-
րաւաքանութեան՝ ի Ս . Քահանայապետէ : Եպիսկոպոսը իւր թեմին մէջ
դատաւոր և վարդապետ է հաւատոյ . քահանայութեան լրութիւնն ունի
և Դրոշմի ու Կարգի ուղղակի պաշտօնեայն է : Նոյնպէս ունի իւր թեմին
վարչական իշխանութիւնը : — Գ . Եպիսկոպոսաց գործակից են քահանայք .
որք Քրիստոսի եօթնասուն և երկու աշակերտաց յաջորդներն են . Ժո-
ղովդապետութիւնները կը վարեն . կը քարոզեն , խորհուրդները կը մա-
տակարարեն , կը ներկայացնեն զԵպիսկոպոս , զՔահանայապետ , զՅիսուս

Քրիստոս: Դ. Հաւատացեալք Ս. Եկեղեցւոյ անդամներն են, միացած Յիսուսի՝ միջոցաւ քահանայից, Եպիսկոպոսաց և Ս. Քահանայապետին, որով կը կազմի Եկեղեցին՝ Յիսուսիւ Քրիստոսիւ որ իւր հիմնադիրն է. աստուածային գաղափար, հրաշայի կազմակերպութիւն, հաստատուն, տեական, անմահ ընկերութիւն, որուն գանձն է Յիսուսի արիւնը և արժանիքը, վախճանն է կեանք յաւիտենից:

Այս է ահա ընդհանուր քրիստոնէութեան հաւատքը Յիսուսի Քրիստոսի Եկեղեցւոյն վրայ, զոր սնէին նաև ի շարս դարուց, բազում Հայրապետք Հայոց, Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Կոստանդին Ե., և այլք. իսկ ժէ. դարուն մէջ Արքահամ Պետրոս Ա. զոր կարգեց անմահ յիշատակաց արժանին Բենեդիկտոս Ժ. Քահանայապետ:

Այսպէս կ'ուարտէր բեմբասաց Եպիսկոպոսը. « Դուք ալ կը դաւանիք այս սուրբ հաւատքը, ո՛վ մեծարելի Հայրապետք, հրեշտակք և հրեշտակապետք հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ, որ Ս. Հոգւոյն մղումով այս յաւիտենական Քաղաքը գալով, հանգիստապէս և սինողապէս նսրոգեցիք զայն յօգատափառ ներկայութեան Սրբազան Տեառն մերոյ Պիոսի Ժ. Քահանայապետի. դաւանութիւն՝ որ արժանի է անջինջ տուներով և անկորուստ յիշատակու գրոշմուելու ընդհանուր Եկեղեցւոյ և հայ ազգին փառաւոր պատմութեան մէջ »:

ՊՕՍԻԻԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

(Շարունակութիւն)

Պ. Մէգիէր կարճօրէն խօսեցաւ յանուն Մաննախումբին, կանգնուած այս յիշատակարանը յանձնելով ի բարեպաշտօն պահպանութիւն տեղւոյն Եպիսկոպոս Գեղ. Մարգարյին. իր ժառանգաւորներն պիտի գան անոր ստեղծ գտնելու համար իրենց արժանաւոր պաշտաման հարկաւոր եղած ներշնչումը:

Ապա ստեղծելու Պ. Ժիւլ Լըմէթը, խօսելու արուեստը՝ մարմնացած և կատարելութեանը մղուած, անգուգափան բանախօսը, զոր պնդումքեր

էին լսելու. Ժիւլ Լըմէթը՝ որ իր հիանալի խօսքին հետ, պիտի բերէր նաև իր խոնարհ հաւատքը. մէկն արտասանելով իր անհամեմատ ճառերուն, ինչպէս ըրած էր Ֆէնըլօնի համար: Համեստօրէն սկսաւ, ամենէն սպասուած անունը. յիշելով. « Այսօր, ըսաւ, Պօսիւէի վրայ ես չէի որ խօսելու էի: այլ Փ. Պրիւնըթիէր, որ այնչափ սիրեց զայն ու փառաւորեց, որ այնքան խորապէս խելամուտ եղաւ անոր նմանութիւն մը կար այս երկու հագիներու միջև, կարգաւորութեան սէր, տրամաբանութեան (dialectique) հրայրք, հաւատալու և հաստատելու պէտքը »:

Այնուհետև կը յիշատակէ Պօսիւէի 240 տարի առաջ Գաղղիական Գահառին մէջ ընդունուիլը, և այն օր խօսած նշանաւոր ճառը. « Պերճախօսութիւնը, կ'ըսէր Պօսիւէ, մեռած է, իր ամէն գոյները կ'աւրուին, իր ամէն գեղն ու շնորհք կ'անհետանան, եթէ խնամ չտարուի կերպով մը հաստատելու լեզուները և դանոնք տեւական ընելու »: Կ'ուզէ սակայն որ գաղղիերէն լեզուին խկտտիւյ յատկութիւնը չվնասուի. ճշգրտութեան հետ կատարելութիւն ստանայ. որպէս զի կարենայ ասլիւլ ցորքան պիտի տեւէ Գաղղիոյ Պետութիւնը:

Ժիւլ Լըմէթը կը խօսի Պօսիւէի գլխաւոր առաքինութեան, Հաւասթին վրայ: « Միզի՛ որ այնչափ բաժնուած ենք ու փոփոխական, Պօսիւէ կատարեալ օրինակը կ'աւտայ ներգաշնակ հոգւոյ մը, որ երբեք ինքն իրեն չհակառակեցաւ: Բացարձակապէս հաւատաց նա. և բոլոր տիեզերքը և բոլոր պատմութիւնը և բոլոր մարդը մեկնեց նա իր հաւատքով... Այդ մարդն որ այնքան սպասով է իր հաւատացած բաներուն, ամենահզօր և ամենաթափանցիկ իմացականութիւնն ունեցած է: Գիտցաւ սակայն չհատացողներուն, իր հակառակորդաց, տկարութիւնը, կասկածները, զորս կը կշտամբէր ու կը խրատէր. « Ի՞նչ տեսան ուրեմն, այս քանի մը հանձարներն, ինչ տեսան ուրիշներէ աւելի: Կը կարծե՞ն արդեօք որ աւելի աղէկ տեսած ըլլան դժուարութիւնները առարկութիւնները անոր համար որ անոնցմէ կը յաղթուին, մինչդեռ ուրիշներն որ զանոնք տեսան, արհամարհեցին զանոնք »: Տեսաւ ուրեմն Պօսիւէ դժուարութիւններն, բայց լուծեց զանոնք կամ յաղթեց, միանգամ ընդ միշտ:

Բայց իր այնքան ջինջ հաւատքը, առանց խտտութեան է: Կը յիշէ ամէն ոք իր վսեմ աղաղակներն և իր սրտաւճայն խօսքերը: Սակայն անոր քարոզչներուն և խորհրդածութեանց մէջ շատ աւելի յաճախ կը տիրէ գորով և քաղցրութիւն: « Հաւատանք ուրեմն, կ'ըսէ, Ս. Յովհաննուս հետ, հաւատանք Աստուծոյ սիրոյն, հաւատքը մեղի քաղցր պիտի երևի

այսքան խանդակաթ կողմէն նկատելով զայն, Բայց անոր կէտուկէն չհաւատանք հերետիկոսաց պէս որ զայն կը կրճատեն ըստ հաճոյս, որոնց հոգիներն տկար են մանուսանդ սրտերը անձուկ և գութն աղետաց փակուած, մինչև իսկ չեն կրնար ըմբռնել Աստուծոյ մը սիրոյն ամբողջ տարածութիւնը, իսկ մենք հաւատանք անպայման. ամբողջ առնունք այդ դեղը, որչափ ալ ծանրագնի ըլլայ ան մեր բանականութեան »:

Շաթոպրիան կը բացառանչէ. « Բարէ՛, ինչպէս կրցաւ Պօսիւէ ճանչնալ մտածմունքի այս խորութիւնը »: — Այո՛, Պօսիւէ բարձրացաւ մինչև իսկ ամենագեղեցիկ բանաստեղծութեան վսեմութիւնը. Ժէ. զարուն առաջնակարգ քնարերգուի կրնայ համարուիլ. բայց առանց փնտռութիւն, անսեթեւեթ, գրեթէ յակամայո. էականը հաւատքն է. այսինքն՝ այն որ զմեզ կը փրկէ, այն որ խաղաղութիւն կուտայ մեզ, զմեզ մեզի հետ կը համաձայնեցնէ, կտրգն ու միութիւնը կը ստեղծէ ի մեզ, զորս պէտք է ստեղծէ նաև ի մարդիկ:

(Շարունակելի)

ՔԱՐՈՁ Ա. ԽՈՐՀՐԻՈՅ ՎՐԱՅ

(Շարունակութիւն եւ վերջ)

Այս նշանները մարգն խնդրեց Աստուծոյն ամեն ժամանակ իբրև գրաւական իւր անոր հետ հաշտութեան, և Աստուած՝ որ այնպիսի մայրական վիշտութիւն մը ցոյց կուտայ իր խեղճ արարածին, բնաւ նրբեք չմերժեց լուսաւոր վկայութիւններով հաստատել այս խոստումներու ստուգութիւնը:

Աստուած է որ ամպերու վրայ դրաւ ծիածանի եօթը գոյները՝ ապահովցնելու համար աշխարհքը նոր ջրհեղեղի մը վտանգէն:

Նա է որ տուաւ Աբրահամու թլփատութեան խորհրդանշանը՝ ընտրեալ ժողովուրդը զատելու համար անսուրբ ժողովրդէնէն:

Նա է որ վար առաւ ջնջող սուրը այն դռներու առջև՝ ուր Գառլին նշանը կը փայլէր:

Նա է ո՞ր բարձրացուց պղնձեայ օձը՝ աւետելու համար բժշկութիւնն ու խաղաղութիւնը:

Նա է որ զրկեց յերկնից խորհրդաւոր հուրը, մատնանիչ ընելու համար եղիայի սեղանը իբր սեղան արդարութեան:

Աստուած է որ Մովսիսի միջոցաւ կարգեց այլեւայլ խորհուրդներ և զոհեր:

Այսպէսով նա կը պարաւանդուէր հին Օրինաց հաւատացիներուն հետ և գրաւականներով կը հաւատէր իւր խօսքին ճշմարտութիւնը:

Թո՛ղ տուէք ուրեմն որ Նոր Օրինաց մէջ ալ ամենաբնական այս տրամադրութիւններով մօտենայ մարդուն, որ դիւրաւ չհաւատար իրեն խոստացուած բաներուն և որ կ'ուզէ ունենալ անոնց ապացոյցը:

Մարդն Աստուած մեզ կը խոստանայ թողութիւնը, շնորհքը, արդարութիւնը, զՀոգին Սուրբ, կը խոստանայ մեզ իր բոլոր պարգևները և կը խոստանայ մեզ զանոնք՝ մինչև ի կատարած աշխարհի: Ո՛հ սակայն սոյնօրինակ խորհրդոց համար ես կ'ուզեմ պայծառ նշան մը, վաւերական խօսք մը, նշան մը անկէ՝ որ չկարենայ թողուլ բանաւոր կասկածներ, խօսք մը որ կարելի չըլլայ ո՛չ աղաւաղել ո՛չ ընդդիմախօսել, այս նշանը կտոր մը հաց է, քիչ մը ջուր, սակաւ ինչ իւր, ևն. և այս պիտի գտնուի ամէն տեղ, այս խօսքն՝ երեք կամ չորս բառեր են, պարզ, որոշիչ, աննախադրելի, անոնք՝ օրինակի համար, որոնցմով կը կատարուի Հաղորդութեան խորհուրդը. » Այս է մարմին իմ, » և այս չորս բառերով շնորհաց տէրը կ'իջնէ. շնորհքը կը նշանակուի և կ'արդիւնաւորի:

Շնորհքը կ'արդիւնաւորի, ահա Յիսուսի Քրիստոսի խորհրդոյն երկրորդ յատկանիշը, յատկանիշ՝ որ զանոնք բոլորովին կը զանազանէ Մովսիսական օրինաց խորհուրդներէն: Մեր խորհուրդները կուտան այն շնորհքն որու նշանակներն են. և կուտան զայն իրենք իրենցմէ, իրենց սեպական զօրութեամբ, ուղղակի և անմիջապէս, քստ որում հաստատուեցան Յիսուս Քրիստոսէ: Այս սքանչելի զօրութիւնը, ազդուութիւնը ի սկզբան անդ կ'ապշեցնէ բանականութիւնը, պէտք է ապահովցնել զայն: Համեմատութիւն չկայ, կ'ըսես, պատճառին և արդիւնքին մէջ: Ըսէ՛ մանաւանդ՝ որ դու զայն չես տեսներ, զի անհասանելի կը մնայ քեզ իբրև խորհուրդ մը այնչափ ուրիշ խորհրդոց մէջ որոնց վրայ դու աւելի պէտք էիր զարմանալ:

Մեկնէ՛ ինծի ինչպէս մարմնաւոր ծնունդը կրնայ հաղորդել կեանքը, և ես քեզի պիտի մեկնեմ ինչպէս հոգեւոր ծնունդը կրնայ հաղորդել քեզ շնորհքը:

Մեկնէ՛ ինծի ինչպէս այս ճամբով Աղամ հաղորդեց իր ամէն զաւակներուն՝ հաղարաւոր տարիներով, սկզբնական մեղքը իր հետեւութիւններով, և ես քեզի պիտի մեկնեմ ինչպէս նորն Աղամ, Յիսուս Քրիստոս, ջնջեց իր շնորհքով ո՛չ միայն սկզբնական մեղքը, այլ նաեւ բոլոր անձնական մեղքերը, և բուժեց նաեւ բոլոր հետեւութիւնները, լուսաւորելով կուրացած հոգւոյ տգիտութիւնները, ամբապնդեց տկար և զեղեւուն կամաց անստուգութիւնները և յաղթանարեց վատասերեալ սրտի մը անտրդ կրքերը:

Մեկնէ՛ ինծի ինչպէս յօգաւորեալ խօսքն՝ որ ինքն իսկ նիւթ է, կը հաղորդէ մտածութիւնը որ հոգեւոր է, և ես քեզի պիտի մեկնեմ ինչպէս խորհրդոց մէջ նիւթը կամ մարմնաւոր մասը կ'ընդունի հոգեւոր զօրութիւն մը՝ փչմամբ կամ խօսքովն պաշտօնէին որ զանոնք կը կատարէ:

Մեկնէ՛ ինծի ինչո՞ւ հայրն ու մայրը կ'օրհնեն իրենց զաւակները, կը գնեն անոնց վրայ իրենց ձեռքերը, և այս կերպով կ'ապահովեն անոնց երջանիկ ապագայ մը, և ես քեզի պիտի մեկնեմ թէ ինչո՞ւ քահանային ձեռքերը կը տարածուին Աստուծոյ և քու հոգւոյդ միջև, հրաւիրելու համար քու վրադ Աստուծոյ երկնաւոր օրհնութիւնները:

Խորհուրդ, խորհուրդ, կը գոչէ բանականութիւնդ: Խորհուրդ, խորհուրդ, կը պատասխանէ մեր հաւատքը:

Երբ դու ստեղծուեցար, բան մը չէիր գիտեր և բան մը չէիր կրնար. խորհուրդ: Երբ արիւնը կ'ազմուի քու կուրծքիդ մէջ, երբ շրջան կ'ընէ, երբ զգայազիր կ'ըլլայ, դու չես կրնար ո՛չ արգելուլ իր շարժումը, ո՛չ վերանորոգել, խորհուրդ: Բնական կարգի մէջ՝ ըլլա՛յ մտաւորական ըլլա՛յ Ֆիզիքական, գաղտնի մէկ կողմ

մը կայ որ շատ աւելի բեղմնաւոր է և կարեւոր: Հոն է որ Աստուած՝ բնութեան արարիչը, կը քաշուի՝ այս զէզ ի զէզ ամպերու մէջէն. որ մերթ կը փարատին մերթ կը խտանան, բայց միշտ կախուած կը մնան մեր գլուխներուն վերեւ, և երբեմն երբեմն լուսաւորելով մեր միտքը... կը խրախուսէ մեր հետաքննութիւններն ու մեր աշխատութիւնները:

Բայց մեր գարուն ամբարտաւանութիւնը կ'ուզէ միայն իրաց լուսաւոր կողմը տեսնել. այնքա՛ն յիմարացած է այն իւր հնարքներով և գիւտերով: Շատ լաւ, ես կ'ընդունիմ վիճաբանութիւնը այս գետնի վրայ և կը պահանջեմ իսկ մեր գարէն որ խոնարհի բարձր բանաւորութեան և աստուածային կարողութեան առջևն որ ինձ կը յայտնեն խորհուրդները:

Համբեցէ՛ք, բնութենէ անցուցէ՛ք մարդկային ցեղի բոլոր հրաշալիքը և տկար գործիքները գործնք կը գործածէ այն՝ ապշեցնելու համար զաշխարհ:

Ինչ է խօսքը. քիչ մը օգ՝ շարժման մէջ գրուած: Բայց երբ մտածուած և հասունցած ըլլայ անիկա մենաւոր հսկման մը մէջ՝ երկայն ժամանակ լռիկ մնայած իմաստնոյն շրթանցը վրայ գալէն յառաջ, ան ատեն իրիշտօրայութիւնն է. երբ անիկա մեծ պատկերներով և ազնիւ զգացումներով կ'ոգեւորի, ճարտասանութիւնն է. երբ անիկա ներդաշնակ կը հնչէ ոտանաւորի մէջ, բանաստեղծութիւնն է. երբ անիկա կ'իջնէ ատենանի մը բարձրութիւնէն, արդարութիւնն է: Այս քիչ մ'օգը՝ հազիւ թէ շարժի, կը գլորէ պետութեանց սահմանները, կընդլնցնէ կամ կը խաղաղէ ժողովուրդները, և յաղթանակել կուտայ՝ զայն ներշնչող հանճարին համաձայն, ճշմարտութիւնը կամ մոլորութիւնը, շար անտերն կամ առաքինութիւնը... Ահա ինչ օր մարդը կ'ընէ խօսքով, և միթէ պիտի չկարենա՞յ Աստուած գործածել զայն մաքրելու, արձակելու, բուժելու համար:

Ինչ է շարժումը. բազում է մը որ կը տարածուի, մատ մը որ կը բարձրանայ կամ կը խոնարհի: Բայց երբ հանճարը կը շարժէ զայն, այս բազումը կը հրամայէ բանակի մը, այս շարժումը ճակատամարտներու յաղթութիւնը կ'որոշէ և ազգերու բախտը կը վճռէ: Կեսար քայլ մը կ'առնու աննշան գետի մը ափանցը վրայ և կը պարտէ զՊոմպէոս, զՀուս, զաշխարհ: Նաբոլէոն մարդարէական մատով մը ցոյց կուտայ անցած ատեն, Մորավիոյ դաշտերը զօրքերուն որ իրեն կը հետեւէին, և երեք օր վերջը արեւը կը լուսաւորէ Աւստրիացի օրը և իր փառաց գազաթնակէտը: Ահա ինչ որ մարդը կը կատարէ շարժումներով ու ձեռքովը... Եւ դու պիտի ժխտե՞ս Աստուծոյ իրաւունքն տալու իւր քահանայից այս շարժումներն ու այս ձեռքը՝ մարդուն զլխուն վրայ հրաւիրելու և իջեցնելու համար իւր շնորհներն և իւր Օրհնութիւնները:

Ինչ է ջուրը. երկու գոյացութիւններու ամենապարզ մէկ բաղադրութիւնն է: Սակայն մարդուն գիտունը անկէ շինեց շոգին, շոգին կը ծխէ, կը շառաչէ, կը քաշէ կը տանի լեռներու և ծովերու մէջէն անասուններ, մեքենաներ, ժողովուրդներ, հալորդակցութեան մէջ կը գնէ երկիրներ և աշխարհներ. կը կարճեցնէ անջրպետները, կը հարկւրապատէ ժամանակներն ու ժամերը, անիկայ՝ արագութիւնն է իր բոլոր օգուտներովը, վաճառականութիւնն է իր զանձերովը, կարողութիւնն է իր բոլոր արժանապատուութիւններովը, քաղաքակրթութիւնն է իր բոլոր փառեքիւրով: Ահա ինչ որ ըրաւ մարդը ջուրէն. և դուք, ով աշխարհային գիտնականներ, չէ՛ք կրնար հանդուրժել այդ գաղափարին թէ Աստուած գործածէ զայն իբրեւ տեսանելի նշան մը՝ ցոյց տալու համար աներեւոյթ սրբութիւնը, որով կը լեցնէ նա հոգի մը, մկրտելով զայն իւր պաշտօնէին ձեռքով:

Հոն ուր մարդը կը գնէ իր զօրութիւնը, իր հոգին, իր հանճարը, լեռները կը հարկեն, կայծակը գէնընկէց կ'ըլլայ, ջուրը, օդը, կրակը հլու նժոյգներ կը գառնան. ժողովուրդներ կ'ունկնդրեն, բանակներն ի խուճապ կը մատնուին, հազարաւոր գլուխ-

ներ կը ծռին շարժուածի մը առջև, հարկւր հազար մարդ կը կանգնին միայն մէկ ձայնին, ամենայն ինչ կը շարժի խօսքով: Հապա ի՞նչ պիտի ըլլայ, կը հարցնեմ ձեզ, երբ ինքն Աստուած մտնէ ի հանդէս:

Հոս է որ պէտք է զգալ այն անհուն հեռաւորութիւնը որ կը զատէ մարդկեղէն բանականութեան ամենէն հիմնալի գործերը՝ աստուածային շնորհաց անվերապի հրաշքներէն: Գիտութիւնն ունի իր պահանքները, տուրեառն՝ իր վերն ու վարը, ճարտարաբունութիւնը իր ձախողութիւնները, կը հասնի օրն յորում խօսքը կը նուազի ճարտասանին շրթունքներուն վրայ, և յորում քնարը կը խորտակուի բանաստեղծին ձեռացը մէջ: Կեսար, տիեզերաց միակ տէրը, զաշոյնի քսան հարուածներու տակ ինկաւ Պոմպէոսի արձանին ոտից առջև, և Աւստրիացի արեւը մարեցաւ Ուաթէրլոյի մահահալուչ տիրազդեցիկ վերջալոյսին մէջ: Մարդը սահման մը կը դնէ իւր տենչանքներուն, իր բանականութիւնը կը խռովի կ'այլալի, իր քաջասրտութիւնը կը վհատի, իր հանճարը կը սխալի, իր աստղը կը տփռուի, նոյն իսկ իր գիւտերն իրեն հակառակ կ'ըլլեն և մահ կ'առնեն անոր և զայն կ'ոչնչացնեն:

Միայն Աստուած կը գործէ ինչ որ կը խորհի, կ'ընէ ինչ որ կ'ըսէ, կը պահէ ինչ որ կը խոստանայ և կը հաստատէ ուր որ կ'ուզէ՝ էակը, շարժումը ու կեանքը:

Իր շնորհը կը ներգործէ ի մեզ սեպհական ազդեցութեամբը և կը գործէ ինքն իրեն՝ մեր ազատ կամքին հետ: Հոն՝ ուր նա կը կոչէ լոյսը, մարդ չկրնար կուտակել խաւարը, և երբ նա կը հրամայէ հոգիին կենդանանալ կամ յարութիւն առնուլ, այն շրթունքներն որ փոխանցեն այս հրամանը՝ որքան որ անարժան ըլլան, և այն ձեռքն որ կը բարձրանայ զայն աալու՝ որքան որ տկար ըլլայ մեղքի պատճառաւ, այն խօսքն որ կ'արտայայտէ զայն՝ որքան որ այնպիսի շրթունքներու վրայ փթթելու համար ճամբէն չեղած կարծուի, բնաւ ամիսնելին պիտի չարգելուն խորհրդոց աստուածային ազդեցութիւնը:

Իւր սեպհական անուամբը չէ որ քահանայն կը մկրտէ կամ կ'արձակէ, այլ յանուն Յիսուսի Քրիստոսի որոյ ներկայացուցիչն է: Իրեն նման խեղճ արարածէ մը չէ որ շնորհը կ'առնուի իր զօրութիւնը, այլ Յիսուս Քրիստոսէ: Աստուած դրաւ հոն իր ձեռքն ի յաւիտենից. Յիսուս Քրիստոս խօսեցաւ և կատարեց ի ժամանակի. այս բաւական է. եղած գործ մըն է, կատարուած իրողութիւն մըն է:

Այսպէս ծուխն որ կ'ելլէ գէպ ի արեւը, շարժելու որ այս աստղը թափէ աշխարհիս վրայ ջերմութիւն ու լոյս: Այսպէս սերմը, ինչ ձեռք որ ըլլայ զայն ցանորդ, ըլլայ նաև ամենապիղծն և ամենաղտելին, կ'աճի, կ'ուռճանայ, կը պողաբերէ և զինքն ընդունօյ հողին մէջէն կ'ելլէ կը կանգնի պերճաբեղուն հասկերով:

Գո՞հ ես գու արդեօք, ո՞վ մարդկային բանականութիւն, և դեռ ի՞նչ կ'ուզես յոյդերէլ Աստուծոյ արդարացնելու համար խորհրդոց աստուածային հաստատութիւնը: Յարմարեցաւ նա քու սովորութեանդ ու պիտոյիցդ, տալով քեզի իւր անտեսանելի շնորհաց տեսանելի նշաններ. նա կը մեկնէ քեզի այն զօրութիւնը զոր կը գործածէ թոյլ տալով քեզ համեմատել զայն քու հանճարիդ ոյժերուն և քու աշխատանացդ ճիգերուն. քեզի կ'ապահովցնէ անոր ազդեցութիւնը՝ գործելով ինքն իրեն և անկախարար պաշտօնէին արժանիքէն, վերստին ծննդեան ու փրկութեան այս գործը:

Եւ մենք, ո՞վ քահանայք Յիսուսի Քրիստոսի, անթէք ընտրութեան, մեր հոգւոյն բոլոր ոյժովը ջանանք Աստուծոյ խորհուրդներուն արժանաւոր մատակարարներ ըլլալու, մեր արժանապատուութեան բարձրութեան վրայ բռնելով զմեզ՝ անկեղծ և շարունակեալ միութեամբ Աստուծոյ և Յիսուսի Քրիստոսի հետ:

Խորհրդոց վարմանալի ներդաշնակութիւնը կը պատասխանէ բանականութեան ամէն մտահոգութիւններուն և շնորհէն վերաշինուած մարդկային բնութեան ամէն պահանջներուն:

Այս հիմնալի պարգևին համար կրնանք արգարապէս կրկնել Բանաստեղծին
խօսքը.

Շինեց զիս աստուածային Չօրութիւնը,

Գերազոյց իմաստութիւնը եւ առաջին Մերը.

Կամ լաւ եւս. « Մատն Աստուծոյ է աստ »:

Ողջունենք ուրեմն և շնորհակալութիւն մատուցանենք Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի մարդասիրութեան. « Փառաւորեմք զքեզ, Գոհանամք Տէր զքէն »:

Եւ Դուք, ո՛վ ազնիւ Հովիւք հոգւոց, շարունակեցէ՛ք ուսումնասիրելու այն
հրաշալիքը որ առատօրէն կը բովանդակուին Սուրբ Խորհրդոց մէջ: Ձեր գործը պիտի
հայթայթէ եկեղեցւոյ համար փառք և հոգւոց շահ և օգուտ:

Մենք ուրախութեամբ կը մաղթենք որ ձեր Սինոդոսը սրբայնէ ձեր ամենասիրե-
լի Հայաստանը և հոնկից տարածուի Քրիստոսի անոյշ հոտն ընդ ամենայն աշխարհ:

Ես կը ըմբոսնամ հրաւիրելով Երջնից Օրհնութիւնները ձեր աշխատութեանց վրայ:
Ո՛հ, սփռէ՛ Աստուած այս ազնիւ և վեհ ժողովին վրայ իւր երկնաւոր ցօղը: Շնորհէ՛
Ձեզ Տէր որ կարենաք ստուգիւ տեսնել որ ձեր ժողովուրդներն վերստին ծաղկին
միշտ հաւատոյ, յուսոյ և սիրոյ մէջ, շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Եւ հիմա վերջապէս, ո՛վ Սրբազան Հայրապետք, վերցուցէ՛ք ձեր աջերն զիս
օրհնելու համար:

ՏԵՂԵԿԱԳՐԱՆԱՆ

Շուրջ երկու ամիս է որ հայ—Կաթողիկէ Սինոդոսը կը շարու-
նակէ իր գործը ի Հոռոմ, ամենայն յարատեւութեամբ և իմաստնախոհ ու-
շագրութեամբ՝ տալու համար Հայ—Կաթողիկէ Հասարակութեան օրինաց
Մատեան մը ի Կրօնականին, որ երբ բարձր ու վերջնական հաստատու-
թիւնն առնու Ս. Առաքելական Աթոսոյ, գործ առնելիաց պիտի ըլլայ
ամենուն համար: Մեր Եկեղեցւոյ օգտին համար ոչ մէկ աշխատութեան
խնայիցին սրբազան Հայրերն, անընդհատ գումարամեհերուն մէջ որոշելով
և հետզհետէ վճռելով ամէն կենսական խնդիր, պարունակուած տասներ-
կու Տիտղոսներու մէջ: Վաղը Սինոդոսը պիտի գումարէ իր Վեցերորդ
Հանդիսութիւնը Նիստը. իսկ գալ Կիրակի տեղի պիտի ունենայ Վերջին
Հանդիսութիւնը Նիստը, և Սինոդոսին փակումը:

Սրբազան Քահանայապետին հրամանաւ և Օրհնութեամբ սկսող և
աւարտող այդ Սինոդոսը մեծամեծ բարիք յառաջ բերէ մեր Հասարակու-
թեան, յորում պիտի կազմէ բարեկարգական Դարագլուխ մը:

ՆՈՐԱՆՏԻՐ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՍ ԶԱՆԴԵՊ

ԻՐԵՆՑ ԹԵՄԵՐՈՒՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄԸ

Առ Արհիպապօսի Գերապայծառ Տէր

Տ. Գարուքիւն Վ. Քեֆիփեան

Եպիսկոպոս Ասանոյ

ի Հռոմ

Արհիպապօսի Գերապայծառ Տէր

Մեր յոյժ սիրելի Հոգևոր Տէրն՝ մեզ հաղորդելով Ձեր Արհիպապօսի Տէրութեան թեմիս հովիւ կարգուիլն՝ հրճուանօք կը փութամք մեր բարեմաղթութիւնքն որդիական հպատակութիւնն՝ և անկեղծ զգացմունքն մատուցանել Արիպապօսի Տեառնդ. և խնդրել Ձեր անդրանիկ Առաքելական օրհնութիւնն:

Հաճեցէք ևս Սրբազան Քահանայապետին և Ամենապատիւ Հոգևոր Տիրոջ մատուցանել հաջօրէն կղերիս և ժողովրդեանս խորին յարգանօք հպատակութիւնն՝ որդիական զգացմունքն՝ խնդրելով մեզ ամենուհամար Նոցա Աստուածապնդ օրհնութիւնքն:

Մենամք խորին յարգանօք և որդիական հպատակութեամբ Արհիպապօսի Տեառնդ

Ատոնա 5 Նոյեմբեր 1911.

Խոնարհ որդիք

Թովհանէս Վ. Խալիսովեան — Գրիգոր Վ. Հատիկեան, Փոխանորդ

Թակոս Եթերեան — Պօղոս Տէլիֆէր — Թ. Տէլիֆէրեան

Մ. Մէլքօնեան — Գ. Ա. Պաղչէճեան — Մ. Թ. Քեհեաեան

Սարգիս Թ. Քեհեաեան — Արսէն Եթերեան — Տ. Ս. Եթերեան,

Թովհանէս Թ. Եթերեան — Տքթ. Թ. Թովակիմեան — Կ. Սէտէֆեան

Մ. Թակոս Զիլթիէօփէրճիւնեան — Մ. Պօղոսեան — Թ. Գ. Պօլատեան

Թովմաս Նաճարեան — Կարապետ Գուլումճուեան — Թ. Զիլանի

Ա. Ս. Աճէմեան, — Տիգրան Ճանսըղեան — Եօղունեան Գրիգոր

Մէսիա Սալճըեան — Օհան Աստուրեան — Կ. Թ. Եթերեան

Սամուէլ ձէլաթեան — Յակոբ Խալիսովեան — Սիմոն Կակոսեան
 Տիգրան Աճէմեան — Պ. Վ. Պալեան — Պետրոս Գուլամճուեան
 Մ. Սալճըեան — Յարութիւն Եէնիգօմշուեան — Յովսէփ Զիւքիւլեան
 Յակոբ Յ. Ճանսըզեան — Կ. Մ. Տէրտէրեան — Արտաշէս Տէրտէրեան
 Նշան Տէրմեսրովեան — Խաչատուր Քէլէշեան — Ա. Սամանճըեան
 Կարապետ Պօրտամեան — Մկրտիչ Երեմեան — Գառապար Մեղունեան
 Էղլա Էրնէքեան — Գրիգոր Մալեան — Ալէքսան Բեաթլիպեան
 Կարապետ Կէօնճէեան — Հաճի Աւետիս Շէքէրճի — Յակոբ Ճուլֆուեան
 Նազարէթ Նուսխաճըեան — Պօղոս Կիրակոսեան — Տ. Զաքարիքճըեան
 Մ. Ս. Կէօյէրչինեան — Յ. Գ. Պատուհասեան — Կ. Նալպանտեան
 Մինաս Սէրոյտարեան — Աստուր Գասապեան — Բիւզանդ Պաղչէճեան
 Սահակ Սօյօղլանեան — Յակոբ Մէլգօնեան — Աւետիս Խաչէրեան
 Քէրովքէ Վէրիս — Էլիս Վէրիս — Յակոբ Ոսկերիչեան
 Յովսէփ Շէմնա — Սարգիս Շըխըրտըմեան — Ստեփան Զամչեան
 Յովսէփ Պ. Պալլեան — Մ. Շահանեան — Ա. Գ. Պատուհասեան
 Սէրովքէ Սարայտարեան — Սարգիս Սէտէֆեան — Կ. Ճանսըզեան
 Մ. Ա. Վարժապետեան — Կ. Տօմարլեան — Յակոբ Տէրմիստեան
 Լևոն Էթէրեան — Զաքար Զաքարեան — Մինրան Ճանսըզեան
 Արմենակ Պազըրճըեան — Վահան Յ. Եեթերեան — Մ. Ինճիրլիքեան
 Կարապետ Ողջունեան — Յախութիւն Անանեան — Գէորգ Թօռունեան
 Գրիգոր Թօռունեան — Ռուբէն Թօռունեան — Զ. Գըլլմանուկեան
 Սարգիս Զատուրեան — Ա. Սարայտարեան — Յակոբ Մ. Մուրատեան
 Մազսուտեան Պ. Արթին — Խ. Թիւթլիւնճիւեան — Ա. Զատուրեան
 Ստեփան Բեհեմեան — Յովհաննէս Զամչեան — Արթին Բինէթեան
 Գրիգոր Գուլամճուեան — Սարգիս Սամանճըեան — Պ. Բօրեապեան

Փ. Պիսնի

Տնօրէն Պատասխանատու

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային Պատիւարհան Սիւննոդոս ի Հոռփ	էջ	289
Պօսիւնի Յիշատակարանը	»	292
Քարոզ Ս. Խորհրդոց վրայ	»	294
Տեղեկագրական	»	298
Նորմէիր Եպիսկոպոսաց հանդիպ իրենց քննեմուն վերաբերումը . . .	»	299



ROMA — PIAZZA CAMPO MARZIO, 6 — ROMA

ԲԱՐԻՁԻ ԵՂԲԱՐԲ

Pontificia Fabbrica di Candele da Chiesa e Lumini da notte senza olio.


Candele speciali per la esportazione

Fornitori dell'Arcibasilica Lateranense, della Basilica Vaticana e di tutte le altre principali Basiliche e Chiese di Roma e d'Italia.

Esportazione in tutti i principali porti del mondo dove la Ditta spedisce la merce franca d'ogni spesa.

E' il più grandioso stabilimento che siasi dedicato esclusivamente alla fabbricazione di Candele per il culto.

* Գահանայապետական Գործարան
* Մոմեղինաց ի պէտս Եկեղեցեաց կը
* պատրաստուին կանթեղք գիշերոյ ա-
* ռանց իւրի կը շինուին յատուկ մոմե-
* ղէնք արտածութեան համար,
* Հայթայթիչք Հատերանեան աւագ
* Մայր Եկեղեցւոյ և Վատիկանեան Մայր
* Եկեղեցւոյ.
* յիտալիա և ի Հռոմ գտնուած միւս
* բոլոր աւագ և գլխաւոր Եկեղեցեաց
* Ընկերութիւնն աշխարհիս ամէն գըլ-
* խաւոր նաւահանգիստներուն ապրանք
* կը ղրկէ՝ ծախքն իր վրայ. Ամենամեծ
* գործարանն է, որ միայն ի պէտս Ե-
* կեղեցւոյ մոմեղինաց շինութեան կը
* պարասպի:



OTTICO

ROMA --- CORSO UMBERTO I, 412 (Palazzo Fiano) --- ROMA

ՓՐԱՆԿԻՍՏԱՆ ՔՐԻՉԴԴԻ

Grand assortiment en jumelles pour theatre, campagne et marine.

Jumelles prismatiques de la maison Zeiss.

Verres cylindriques, prismatiques et combinés.

On exécute toutes sortes d'ordonnances des MM. les Professeurs oculistes.

* Կը վաճառէ ատան գնով ամէն տե-
* օակ դիտակներ թատրոնի, զաշտի և
* Ծովու համար
* Ունի երկաշեայ դիտակք հատու-
* ծակողմ ապակիով Ծախ Գործարանէն
* և Ապակիներ գլանացեւ, հատուածա-
* կողմ և զուգեալք.
* Կը կատարուին ամենայն ճշու-
* թեամբ որ և է յանձնարարութիւնք
* ՊՊ. ակնաբուժից.

ՐՕՏԱ, ԷՊԱՆԱԷՅՈՒ Ե Ը.

FORNITORI DI SUA SANTITÀ

ROMA — VIA BORGIO NUOVO N. 96 — ROMA


ՐՕՐԱ ԵԱՆԱՅԻՈՒ ԵՒ ԸՆԿԵՐԻ

Fabbrica di Statue Religiose in
qualsiasi materia e dimensione

—
Invio di Listini, fotografie e pre-
ventivi

Gratis a richiesta

—
Per telegrammi: Statue — Roma.




Սուրբ Արձաններու.

Դորձարան

Ամէն տեսակ նիւթէ
և մեծութենէ պատրաստուած

—
Արձաններու.

ցուցակն և լուսանկարն
խնդրովն ձրի կը լրկուի



Guiglielmo

Gandungi

ROMA

PIAZZA TOR SANGUIGNA N. 2-3 — VIA CORONARI N. 1


ԿՈՒՆԻԷԼՄՈՍ ԿԱՌԻՏԵԼՆԻ

GRAND ASSORTIMENT

Chapelets, Medailles, Reliquaires
Livres de dévotion
et autres articles de religion
Oleographies

MOSAÏQUES ET CAMÉES

Objets des Beaux Arts
Cadres, Bijouteries, Photographies



ՄԵՇ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Վարդարան, միտալ, մատուցի աման
աղօթագրքեր
ուրիշ քերականական առարկայներ
մեծ խզատիպ պատկերներ

ՄՕՐԱՆԳ

Գեղարուեստական նիւթեր
նկարներ, գոհարեղէնք, լուսանկարներ